

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ

Քաղաք Երևան
թվական

քսանը հուլիսի, երկու հազար տասնինը

ՀՀ արդարադատության նախարարությունում հուլիսի 20-ին տեղի է ունեցել նոր ձևավորված Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին կից հասարակական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) առաջին նիստը:

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

Ռուստամ Բադայան

Արդարադատության նախարար

Քիստիննե Գրիգորյան

Արդարադատության նախարարի տեղակալ

Սրբուհի Գալյան

Արդարադատության նախարարի տեղակալ

Սուրեն Գրիգորյան

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր

Լուսինե Մարտիրոսյան

ԱՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ-մամուլի քարտուղար

Մարիամ Գալստյան

Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման բաժնի պետ

Բաբկեն Սիմոնյան

«Արագ» բարեգործական հասարակական կազմակերպություն

Հայկ Եգանյան

«Ընդդեմ Իրավական

	Կամայականության» հասարակական կազմակերպություն
Դավիթ Ամիրյան	Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան
Նիկոլայ Հովհաննիսյան	Եվրասիա համագործակցություն հիմնադրամ
Ավետիք Իշխանյան	«Հայաստանի Հելսինկյան կոմիտե» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն
Հայկ Մարտիրոսյան	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպություն
Տիգրան Եգորյան	«Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպություն
Հայկուհի Հարությունյան	«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպություն
Արթուր Չերչինյան	«Հարկ վճարողների և գործարարների իրավունքների պաշտպանության» հասարակական կազմակերպություն
Մարիամ Անտոնյան	«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպություն
Արտակ Կիրակոսյան	«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպություն

Քվորումն ապահովված էր:

ՕՐԱԿԱՐԳ

Թեմա, զեկուցող
Ողջույնի խոսք՝ ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյան
Թեմա՝ Դատաիրավական բարեփոխումներ. արդարադատության ոլորտի զարգացմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներ
Զեկուցող՝ Քրիստիննե Գրիգորյան ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Հարցուպատասխան
Թեմա՝ «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի
Զեկուցող՝ Մարիամ Գալստյան ՀՀ ԱՆ Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման բաժնի պետ
Հարցուպատասխան

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Նախարար Ռուստամ Բադասյանը ողջունել է ներկաներին և նշել, որ վերջին շրջանում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ անցկացվել են քննարկումներ, ներկայացվել են Հակակոռուպցիոն ռազմավարության՝ www.e-draft.am –ում տեղադրված նախագծի տարբերակը, որն արդեն լրամշակման փուլում է

և դատաիրավական ռազմավարության Նախարարության տեսլականը, որի ամբողջական տարբերակը պատրաստ կլինի առաջիկա շաբաթներին:

Օրակարգային առաջին հարցին անդրադառնալով՝ նախարարի տեղակալ Քրիստիննե Գրիգորյանը ներկայացրել է Դատաիրավական բարեփոխումների ռազմավարության և գործողությունների ծրագրում ներդրվելիք նորարարական գործիքները, ուղղված՝ միջոցառումների ֆինանսական գնահատմանը, դրանց մշտադիտարկման և գնահատատման չափելի գործիքակազմերի ներդրմանն ու իրականացված աշխատանքների վերաբերյալ պատշաճ հաղորդակցության կազմակերպմանը: Բովանդակային առումով փոխնախարարն առանձնացրել է դատավորների բարեվարքության և գույքային դրության գնահատման արդյունավետ գործող մեխանիզմների սահմանումը Դատական օրենսգրքում և հարակից օրենքներում: Քրիստիննե Գրիգորյանի խոսքով, կարճ ժամանակահատվածում ամփոփելով վերջիններիս ուղղությամբ տարվող աշխատանքները, ստանալով միջազգային մասնագիտացված կառույցների փորձաքննության արդյունքները, փաստաթղթի շուրջ կկազմակերպվեն հանրային քննարկումներ շահագրգիռ բոլոր կողմերի հետ:

Ավետիք Իշխանյանն առաջարկել է բարեվարքության ստուգումն իրականացնել ոչ միայն դատական իշխանության, այլև իրավապահ համակարգի ներկայացուցիչների նկատմամբ: Անդրադառնալով ոլորտը բարեփոխելուն ուղղված դատավորների աշխատավարձերի բարձրացման ծրագրին՝ Ա. Իշխանյանը նշել է, որ միայն դրանով խնդրին լուծում չի տրվի, անհրաժեշտ է նաև ստեղծել դատավորների ռեզերվ:

Հայկ Մարտիրոսյանն առաջարկել է դիտարկել մասնավոր գանգատի գործերով վարույթների կարճման գործընթացի ներդրման հնարավորություն՝ վնասի փոխհատուցման դեպքերում: Հ. Մարտիրոսյանն անդրադարձել է նաև Հակակոռուպցիոն ռազմավարության տնտեսական հիմնավորումներին՝ առաջարկելով հրապարակայնացնել այն:

Արտակ Կիրակոսյանը հարցադրում է կատարել՝ արդյո՞ք հնարավոր է միայն մարդկանց փոխելով համակարգային իրավիճակ փոխել: Առաջարկել է առավել գլոբալ մոտեցում ցուցաբերել առկա խնդիրներին:

Արթուր Չերչինյանի հարցը վերաբերել է դատաիրավական բարեփոխումների շրջանակում փորձագիտական կառույցների ուղղությամբ տարվող աշխատանքներին՝ մտահոգություն հայտնելով, որ այդ ոլորտներում կան կոռուպցիոն ռիսկեր:

Հայկ Եգանյանը կարծիք է հայտնել, որ պատշաճ վարչարարության և վերադասության բողոքարկման համակարգը ձևական է, նոտարական համակարգում առաջարկել է ներդնել տեսաձայնագրման համակարգ, իսկ Մարդու իրավունքների պաշտպանին օժտել դատական վեճի դեպքում խորհրդատվական կարծիք ներկայացնելու հնարավորությամբ:

Հայկուհի Հարությունյանն առաջարկել է Ռազմավարության գործողության համար նախատեսել 2 տարվա ժամկետ, քանի որ, իր կարծիքով, երկարաժամկետ ռազմավարությունները կենսունակ չեն: Վեթինգի համար առաջարկել է դիտարկել ինստիտուցիոնալ առանձին գործընթաց՝ հրատապությամբ պայմանավորված, իսկ դատաիրավական համակարգային բարեփոխումների համար նախատեսել առավել երկարաժամկետ գործընթաց: Հ. Հարությունյանը նաև կարծիք է հայտնել, որ երկու փաստաթղթերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտը հետընթաց է արձանագրել:

Դավիթ Ամիրյանն առաջարկել է նախկինում ձևավորված Դատաիրավական բարեփոխումների աշխատանքային խմբի կազմած փաստաթուղթն ու դրանում նախատեսված առաջարկներն ուսումնասիրել և ներառել պատրաստվող ռազմավարությունում: Առաջարկել է ռազմավարություն գրելուց առաջ գնահատական տալ անցյալին՝ ներկայացնելով ստացած ժառանգությունը: Առաջարկել է նաև դատաիրավական բարեփոխումների շղթայում դիտարկել իրավակիրառ ամբողջ համակարգը, ինչպես նաև բարեվարքության ստուգման ենթարկել ոչ միայն գործող դատավորներին, այլ նաև նոր նշանակվողներին:

Նախարար Բաղասյանը, անդրադառնալով հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հարցադրումներին, նշել է՝

1. Բարեվարքության ստուգման ենթարկվելու են նաև քննչական և դատախազական մարմինների ներկայացուցիչները:
2. Դատավորների թափուր հաստիքներ հետ կապված ուսումնասիրություն է կատարվում, թե, ըստ գործերի ծանրաբեռնվածության, օրինակ, Հակակոռուպցիոն նոր դատարանում քանի հաստիք է անհրաժեշտ լինելու: Քննարկվում է, որ այդ դատարանի դատավորների կեսը լինեն բարեվարքության ստուգման անցած փորձառու դատավորներ, իսկ մյուս կեսը՝ վերապատրաստված նոր դատավորներ:
3. Ռազմավարության տնտեսական հիմնավորումների ուղղությամբ աշխատանքները շարունակվում են՝ ուսումնասիրվում է վիճակագրությունը,

որպեսզի ԵԽ փորձագետին տրամադրվեն հավաքագրված տեղեկությունները, ինչի հիման վրա էլ կներկայացվի տնտեսական գնահատականը:

4. Մասնավոր գանգատների մասով ոչ միայն քրեական գործերով, այլ բոլոր տեղերում ուսումնասիրվում է պարզեցված վարույթների ներդրման հնարավորությունը:
5. Դատաիրավական ոլորտում համակարգային բարեփոխումներն իրականացվելու են նաև էլ. արդարադատության ներդրմամբ, նոր սերնդի դատավորներ ներգրավելով: Խնդիրների լուծումը հինգ տարում իրականացնել հնարավոր չէ, բայց լուծման ուղղությամբ աշխատանքները շարունակական բնույթ են կրելու:
6. Փորձագիտական ոլորտին վերաբերող հարցը նախարարի ուշադրության կենտրոնում է: Ինչ վերաբերում է համակարգում կոռուպցիոն ռիսկերին, ապա այդտեղ հիմնականում անելիք ունի իրավապահ համակարգը:
7. Պատշաճ վարչարարության և վարչական բողոքների արդյունավետ բողոքարկման մասով կշարունակվեն ուսումնասիրությունները:
8. Նոտարական գրասենյակում գործարքի ժամանակ տեսաձայնագրման համակարգի ներդրման միտքը նոր գաղափար է. Արդարադատության նախարարությունը պատրաստ է քննարկման՝ հասկանալու համար դրա տնտեսական բաղադրիչը:
9. Մարդու իրավունքների պաշտպանին դատական վեճերում խորհրդատվական լիազորություններով օժտելը, թեև խնդրահարույց կարող է դիտարկվել, բայց Արդարադատության նախարարությունը կողմ է գաղափարի հետագա քննարկմանը:
10. Դատաիրավական բարեփոխումների ռազմավարությունը նախատեսված է լինելու 4 տարվա համար, բայց այն լինելու է ճկուն և կենդանի փաստաթուղթ: Լինելու են միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր, որոնցում, օրինակ հոկտեմբերին, հնարավոր կլինի կատարել փոփոխություն:
11. ՄԻՊ ռազմավարության մշակման աշխատանքներն այս տարի սկսվելու են և նախանշվելու են գերակա ուղղությունները:
12. Միայն դատական համակարգով չի սահմանափակվելու բարեվարքության ստուգումը, բայց պետք է ամբողջ ծավալը հասկանալ և հաշվի առնել, որ ունենք ռեսուրսների խնդիր:

13. Անցյալին գնահատականը տրված է հարուցված քրեական գործերի քանակով և բովանդակությամբ, բայց Նախարարությունը դեմ չէ նաև քննարկելու անցյալի գնահատական տալու հասարակական կազմակերպությունների պատկերացրած մեթոդը:

Օրակարգային երկրորդ հարցը ներկայացրել է ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սրբուհի Գալյանը և անդրադարձել Հակակոռուպցիոն ռազմավարության և միջոցառումների ծրագրի նախագծի հիմնական կարգավորումներին՝ ուղղված կոռուպցիայի կանխարգելմանը, կոռուպցիոն հանցագործությունների բացահայտմանն ու հակակոռուպցիոն կրթությանը: Նախարարի տեղակալն անդրադարձել է նաև հակակոռուպցիոն երկու նոր մարմինների՝ Հակակոռուպցիոն կոմիտեի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործիքակազմերին և տեղեկացրել, որ նախագիծը դեռևս լրամշակման փուլում է և դրա արդյունքում նախագծում կներառվեն նաև մոնիթորինգի իրականացման համակարգը և ռազմավարության ֆինանսական գնահատականը:

ՀՀ ԱՆ Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման բաժնի պետ Մարիամ Գալստյանը առավել մանրամասն ներկայացրել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործառույթները, Հակակոռուպցիոն կոմիտեի անկախության երաշխիքներն ու կարևորել իրական սեփականատերերի բացահայտմանն ուղղված օրենսդրության կատարելագործումն ու ապօրինի ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագանձման նախագծի մշակումը:

Ավետիք Իշխանյանն անդրադարձել է ստեղծվելիք հակակոռուպցիոն մարմինների երաշխիքներին և պաշտոնատար անձանց կողմից իրենց բիզնեսը հավատարմագրային կառավարման տալու փորձին՝ նշելով, որ պաշտոն ստանալիս բիզնեսը պետք է վաճառեն, քանի որ փորձը ցույց է տալիս, որ հիմնականում հավատարմագրային կառավարման հանձնվում է որդիներին կամ այլ ազգականների:

Հայկ Մարտիրոսյանը խիստ դրական է գնահատել այն, որ կանխարգելիչ և իրավապահ գործառույթները տարանջատված են և չկա գործառույթների գերկենտրոնացում: Հ. Մարտիրոսյանի համոզմամբ կարևոր է, որ հակակոռուպցիոն մարմինների ղեկավար կազմերի ձևավորումը լինի ապաքաղաքական և ձևավորվի Ազգային ժողովի կողմից:

Դավիթ Ամիրյանը մտահոգություն է հայտնել, որ այս փոփոխությունների արդյունքում խոշտանգումների գործերը չի քննելու ՀՔԾ-ն և այդ գործերը հասցեագրվելու է Քննչական կոմիտեին: Դ. Ամիրյանը ևս կարևորել է հաշվետու ու պատասխանատու կառույցի ստեղծումը՝ անկախության մաքսիմալ երաշխիքներով:

Հայկուհի Հարությունյանը ևս խնդիր է համարել հակակոռուպցիոն մարմինների ղեկավար անձնակազմի նշանակման հարցը և ընդգծել, որ օրենսդիրի կողմից ընտրվելու պարագայում հաշվետվողականության հարցը կլուծվի:

Նախարար Բաղասյանը, անդրադառնալով օրակարգային երկրորդ հարցի առնչությամբ հնչած կարծիքներին ու մտահոգություններին, նշել է՝

1. Հակակոռուպցիոն կոմիտեի անկախության գործոնը պետք չէ բացարձականացնել. ամենաբարձր երաշխիքը կոմիտեն զերծ պահելու քաղաքական ազդեցությունից՝ անկախ հանձնաժողովի գաղափարն է, որը կունենա վետոյի իրավունք:
2. Հավատարմագրային կառավարիչների ինստիտուտ, որպես այդպիսին, Հայաստանում չկա: Պետք է ստեղծվի իրական հավատարմագրային կառավարիչների ինստիտուտ՝ բացառելով ազգակցական կապերը:
3. Կարևոր է, որ նոր օպերատիվ մարմնի կազմում լինեն մաքուր մարդիկ: Միաժամանակ պետք է հասկանալ փորձառուների տեղափոխման ստուգման մեխանիզմը, ինչպես նաև դիտարկել հին մարմինների գործունեության շարունակականությունը՝ որպես անցումային շրջան, քանի դեռ նոր մարմինը չի ընկել հունի մեջ:
4. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման օրինագծի վերաբերյալ միջազգային կառույցներից առաջարկները ստանալուն պես Նախագիծը կներկայացվի հանրային քննարկման, և եթե անհրաժեշտ լինի, նորից կներկայացվի միջազգային կարծիքի:

Նիստի ավարտին արդարադատության նախարարը շնորհակալություն է հայտնել ՀԿ-ների ներկայացուցիչներին ակտիվ ու արդյունավետ մասնակցության համար և վստահեցրել, որ այս ձևաչափով հանդիպումները կրելու են շարունակական բնույթ:

Արձանագրությունը բաղկացած է 12 էջից:

Նիստը նախագահող՝ Ռ.Բաղասյան